

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԻԶԵՎԱՆ – 2017

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	023101.00.6 Հայոց լեզու և գրականություն
2. Բուհը	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	բանասիրության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2017/18
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի նախապատրաստելու բանասիրության բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով զինված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

1. Համադրելու տեսական և կիրառական լեզվաբանության և գրականագիտության գիտելիքները բանասիրական ուսումնասիրություններ կատարելու, դասավանդելու, խմբագրական աշխատանքներ կատարելու համար:

2. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր.

մանկավարժական աշխատանք իրականացնելիս:

3. Աշխատելու գիտական և մանկավարժական բնագավառներում և կատարելու տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծություն:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. դասակարգելու բանասիրության հիմնական սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները,

Ա2. ներկայացնելու և մեկնաբանելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծությունների մեթոդները.

Ա3. թվարկելու և համեմատելու լեզվաբանական և գրականագիտական արդի ուղղությունները,

Ա4. բացատրելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ, խմբագրական և թարգմանական աշխատանքներ կատարելու հիմնարար սկզբունքները:

Դասավանդման/ուսումնառության մեթոդները

Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա4 կետերում նշված գիտելիքները և իմացությունը հետևյալ մեթոդներով.

Ա1, Ա2.

- դասախոսություններ՝ նյութի մանրակրկիտ մեկնաբանությամբ,
- թեմատիկ քննարկումներ,
- գիտական սեմինարներ.
- գործնական և սեմինար պարապմունքներ,

Ա3, Ա4.

- դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,
- գործնական պարապմունքներ.
- ստեղծագործական և հետազոտական ինքնուրույն աշխատանքներ
- ուսումնական նախագծեր,
- տեքստային աշխատանք,
- կուրսային աշխատանքի կատարում:

Գնահատման մեթոդները
Ուսանողների Ա1-Ա5 գիտելիքները

	րը և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով. Ա1, Ա2. Ռեֆերատներ բանասիրության հիմնահարցերի և հայեցակարգերի և լեզվաբանական ու գրականագիտական վերլուծությունների մեթոդների վերաբերյալ: Ա3, Ա4. ▪ Ռեֆերատներ խմբագրական և թարգմանական աշխատանքներ կատարելու հիմնարար սկզբունքների մասին: ▪ ստեղծագործական և հետազոտական ինքնուրույն աշխատանքների գնահատում, ▪ կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն.
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները, Բ2. օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս, Բ3. իրականացնելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ,	Դասավանդման/ուսումնասիրության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ5 կարողությունները հետևյալ մեթոդներով. Բ1 – Բ4. ▪ դասախոսություններ և սեմինար ▪ պարապմունքներ, ▪ գործնական պարապմունքներ, ▪ առաջադրանքներ և նախագծեր. ▪ ռեֆերատներ, Բ5.

Բ4. խմբագրելու, սրբագրելու, թարգմանելու տարաբնույթ տեքստեր: Բ5. ծավալելու ինքնուրույն մասնագիտական գործունեություն, ակադեմիական և այլ ոլորտներում որոշակի ղեկավարության ներքո իրականացնելու հետազոտական աշխատանքներ:	▪ առաջադրանքներ, ▪ արտադրական պրակտիկա. ▪ ուսումնական նախագծեր. Գնահատման մեթոդները Ուսանողների Բ1-Բ5 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Բ1-Բ4. ▪ առաջադրանքներ, ▪ ստուգաթղթեր և քննություններ, ▪ ուսումնական նախագծեր, ▪ խմբային նախագծեր, Բ5. ▪ առաջադրանքներ, ▪ ստուգաթղթեր և քննություններ, ▪ ուսումնական նախագծեր. ▪ ատենախոսության պաշտպանություն.
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ1. աշխատելու թիմում, Գ2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպել խնդիրներ և լուծել, Գ3. տարբեր աղբյուրներից հայթայթելու տեղեկատվություն և վերլուծել, Գ4. մասնագիտական թեմանե-	Դասավանդման/ուսումնասության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով. Գ1 –Գ3. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինարներ, ▪ գիտահետազոտական աշխատանք, ▪ կուրսային և ավարտական աշխատանքի պատրաստում. Գ4-Գ5. ▪ անհատական հանձնարարությունների կատարում.

րով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, Գ5. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, Գ6. ուսումնասիրության ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:	▪ բանավոր ներկայացումներ, ▪ գիտական սեմինար. Գ6. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, Գնահատման մեթոդները Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Գ1-Գ6. ▪ զեկուցումներ, ▪ ռեֆերատների հանձնարարում միջառարկայական կապերի վերաբերյալ, ▪ գրավոր կարճ հաղորդագրություններ, ▪ ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանություն:
---	---

11. Ծրագրի կառուցվածքը
11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը
Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (32 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (10 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մասնագիտական (154 կրեդիտ աշխատածավալով) և հատուկ մասնագիտական դասընթացներ (20 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (24 կրեդիտ աշխատածավալով): 1. Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս <i>Պարտադիր դասընթացներ (16 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպա-

տակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

Կամրնտրական դասընթացներ (16 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

2. Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամրնտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս (154 կրեդիտ)

Ապահովում է մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

4. Հատուկ մասնագիտական կրթամաս (20 կրեդիտ)

Ապահովում է տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

5. Գործական այլ մոդուլներ

Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատաձևավորվ 2 կուրսային աշխատանքի կատարում:

Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)

Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ)

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

Գործական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄՇՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
<i>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i> ▪ 0305/ B07. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ) ▪ 0305/ B08. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ) ▪ 0301/ B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ) ▪ 0301/ B02. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ) ▪ 0001 Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) <i>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i> ▪ 0101/ B02. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) ▪ 0103/ B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ) <i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i> ▪ 0302/ B03 Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն - 1 (4 կրեդիտ)	▪ 0102/ B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ) կամ ▪ 0101/ B01. Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ) ▪ 0305 / B04. Անգլերեն լեզու -1 (4 կրեդիտ) կամ ▪ 0305 / B01. Ֆրանսերեն լեզու -1 (4 կրեդիտ) ▪ 0305 / B05. Անգլերեն լեզու -2 (4 կրեդիտ) կամ ▪ 0305 / B02. Ֆրանսերեն լեզու -2 (4 կրեդիտ)	

▪ 0302/ B13 Գրաբար -1 (3 կրեդիտ) ▪ 0302/ Հայոց լեզվի և խոսքի մշակույթ(2 կրեդիտ) ▪ 0302/ B31 Հայ ժողովրդի բանասիրություն (5 կրեդիտ) ▪ 0302/ B57 Գրականագիտության ներածություն (2 կրեդիտ) ▪ 0302/ B14 Գրաբար -2 (3 կրեդիտ) ▪ 0302/B09 Լեզվաբանության հիմունքներ (4 կրեդիտ) ▪ 0302/ B18 Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն (7 կրեդիտ) ▪ 0302/ B04 Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն – 2 (4 կրեդիտ)		
--	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄՇՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
<i>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i> ▪ 0304/ B05. Փիլիսոփայության հիմունքներ	<i>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i> ▪ 0201/ B01. Տնտեսա-	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

(4 կրեդիտ) ▪ 0001 Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս ▪ 0302/ B15. Գրաբար -3 (3 կրեդիտ) ▪ 0302/B20. 19-րդ դարի հայ գրականության պատմություն -(5կրեդիտ) ▪ 0305/B9. Անտիկ և վերածննդի արտասահմանյան գրականության պատմություն (5 կրեդիտ) ▪ 0302/B05. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 1(5 կրեդիտ) ▪ 0302/B55. Բարբառագիտության հիմունքներ (2 կրեդիտ) ▪ 0302/B21. 19-րդ դարի հայ գրականության պատմություն -2 (7 կրեդիտ) ▪ 0304/B92. 17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն (6 կրեդիտ) ▪ 0302/B06. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 2 (5 կրեդիտ)	գիտություն (2 կրեդիտ) կամ ▪ 0304/ B03. Քաղաքագիտություն (2 կրեդիտ) կամ ▪ 0304/ B04. Իրավագիտություն (2 կրեդիտ) ▪ 0202/ B01. Մշակութաբանություն (2 կրեդիտ) կամ ▪ 0304/ B06. Կրոնների պատմություն (2 կրեդիտ) ▪ 0305/ B09. Ռուսաց լեզու -3 (4 կրեդիտ) կամ ▪ 0305 / B06. Անգլերեն լեզու -3 (4 կրեդիտ) կամ ▪ 0305 / B03. Ֆրանսերեն լեզու -3 (4 կրեդիտ) Հատուկ մասնագիտական կրթամաս ▪ 0302/B81. Հայ և ընդհանուր դիցաբանություն (2 կրեդիտ) կամ ▪ 0302/B73. 13-18-րդ դդ. հայ քնարերգությունը (2 կրեդիտ)	
---	--	--

Կրթական այլ մոդուլներ ▪ Կուրսային աշխատանք-1 (2 կրեդիտ)	▪ 0302/B85. Հայերենի իմաստափոխությունը (2 կրեդիտ) կամ ▪ 0302/B82. Գրաբարի և արդի արևելահայերենի ընդհանրությունները և տարբերությունները (2 կրեդիտ)	
---	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>3-րդ ուստարի /5-6 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս ▪ 0001/ B05. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (4 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս ▪ 0305/Բ104. 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն (4 կրեդիտ) ▪ 0302/Բ17. Ընդհանուր լեզվաբանություն (4 կրեդիտ) ▪ 0302/Բ22. 19-րդ դա-	Հատուկ մասնագիտական կրթամաս ▪ 0302/B74. Հայ գրականության <<հեթանոս>> ավանդները (2 կրեդիտ) կամ ▪ 0302/B75. Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները (2 կրեդիտ) ▪ 0302/ Ժամանակակից հայերենի կետադրության հիմունքներ (2 կրեդիտ) կամ ▪ 0302/B83. Հայերենի	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

րավերջի և 20-րդ դարակգրի հայ գրականության պատմություն -1(6 կրեդիտ) ▪ 0302/Բ07. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն – 1 (4 կրեդիտ) ▪ 0302/Բ32. Գրականության տեսություն (5 կրեդիտ) ▪ 0302/Բ23. 19-րդ դարավերջի և 20-րդ դարակգրի հայ գրականության պատմություն -2 (6 կրեդիտ) ▪ 0302/Բ10 Հայոց լեզվի պատմություն-1(4կրեդիտ) ▪ 0302/Բ08. Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն - 2 (4 կրեդիտ) ▪ 0302/Բ16. Արևմտահայերեն (4 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ ▪ Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (4 կրեդիտ) ▪ Կուրսային աշխատանք-2 (4 կրեդիտ)	ուղղագրության պատմություն (2 կրեդիտ) ▪ 0302/Բ88. Ռուս-հայերեն թարգմանության խնդիրներ (2 կրեդիտ) կամ ▪ 0302/Բ84. Միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգը (2 կրեդիտ) ▪ 0302/Բ76. Հայկական տաղաչափություն (2 կրեդիտ) կամ ▪ 0302/Բ72. Հայ մատենագրություն (2 կրեդիտ)	
--	---	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

4-րդ ուստարի /7-8 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
Ընդհանուր մասնագիտական կրթամաս 0302/B24. Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն (10 կրեդիտ) 0302/B26. Արդի հայ գրականության պատմություն (5 կրեդիտ) 0302/B09. Հայոց լեզվի ոճագիտություն (5 կրեդիտ) 0305/B 81. Ռուս գրականության պատմություն (4 կրեդիտ) 0302/B29. Հայ գրաքննադատության պատմություն (5 կրեդիտ) 0302/B11. Հայոց լեզվի պատմություն-2 (4 կրեդիտ) 0304/B47. Տրամաբանություն (3կրեդիտ) Գրթական այլ մոդուլներ - Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ) - Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)	Հատուկ մասնագիտական կրթամաս 0302/ B87. Հայոց տեղանվանագիտություն (2 կրեդիտ) կամ 0302/ B86. Ժամանակակից հայերենի նորաբանությունները (2 կրեդիտ) 0302/B77. Քննադատության տեսություն (2 կրեդիտ) կամ 0302/B78. 20-րդ դարակերպի իրադարձությունները հայ նորագույն գրականության մեջ (2 կրեդիտ) 0302/B89. Լեզվական վերլուծության հիմունքներ (2 կրեդիտ) կամ 0302/B90. Լեզվանըշանագիտություն (2 կրեդիտ) 0302/B47. Ֆրանսահայ գրականությունը 1920-60-ական	Առնվազն 240 կրեդիտի կուտակում Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00

	թվականներին (2 կրեդիտ) կամ ▪ 0302/B80. Նորագույն շրջանի հայ պոեմը (2 կրեդիտ)	
--	--	--

11. 3. Արտադրական պրակտիկայի հնարավորությունները և պայմանները

Արտադրական պրակտիկան կազմակերպվում է Տավուշի մարզի գրադարաններում, «Իջևան» թերթի խմբագրությունում, «Տավուշ» հեռուստաստուդիայում, ԵՊՀ-ի ԻՄ-ի տարբեր կառույցներում:

11.4. Ավարտական ատեստավորումներ

Ուստարի	Անվանումը
4-րդ ուստարի	Բակլավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն Անփոփիչ ատեստավորում

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է:

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ

Տե՛ս «ԵՊՀ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2017 թ., էջ 11-19:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Հայոց լեզու և գրականություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել գիտահետազոտական, կրթական-մանկավարժական, լրատվական, հրատարակչական ոլորտներում գործող հիմնարկներում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Գիտահետազոտական ինստիտուտներ

- Կրտսեր գիտաշխատող:

Լրատվական

- լրագրող
- թղթակից
- խմբագիր
- սրբագրիչ
- հաղորդավար
- Թերթերի, ամսագրերի և այլ հրատարակչություններում սրբագրիչ
- գործավար

Հնարավոր աշխատավայրերն են՝ ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետները, ՀՀ ԳԱԱ լեզվի և գրականության ինստիտուտները, ավագ և հիմնական դպրոցները, հրատարակչությունները և խմբագրությունները:

Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ԵՊՀ –ի մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- գրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը

- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

18. Լրացուցիչ տեղեկատվություն

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք, ենթադրվում է, ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած

ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ-ի դասընթացների տեղեկագրքում:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և խմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Ա1	դասակարգելու բանասիրության հիմնական սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները,	Գ1	Թիմում աշխատելու կարողություն;
Ա2	ներկայացնելու և մեկնաբանելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծությունների մեթոդները.	Գ2	Գիտելիքները պրակտիկայում կիրառելու, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ;
Ա3	թվարկելու և համեմատելու լեզվաբանական և գրականագիտական արդի ուղղությունները,	Գ3	Տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու և վերլուծելու հմտություններ;
Ա4	բացատրելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ, խմբագրական և թարգմանական աշխատանքներ կատարելու հիմնարար սկզբունքները,	Գ4	Հանրության հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական կարողություն;
		Գ5	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ բանավոր և գրավոր խոսքը կառուցելու, մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություններ:
		Գ6	Միջառարկայական կապեր ստեղծելու կարողություն:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ			
Բ1	կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները,	Բ4	խմբագրելու, սրբագրելու, տարաբնույթ տեքստեր թարգմանելու/գրաբարից, միջին հայերենից/ կարողություն:
Բ2	լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,	Բ5	ծավալելու ինքնուրույն մասնագիտական գործունեություն, ակադեմիական և այլ ոլորտներում որոշակի դեկլարության ներքո իրականացնելու հետազոտական աշխատանքներ:
Բ3	իրականացնելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ,		

Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից:															
1	2	3	4	3	3	1	3	4	4	2	4	2	4	1	2

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Ռուսաց Լեզու-1	4														+	+	
Ռուսաց Լեզու-2	4														+	+	
Ռուսաց Լեզու-3	4														+	+	
Օտար լեզու (1-3)	4+4+(4)														+	+	
Հայոց պատմության հիմնահարցեր- 1	2	+							+				+				+
Հայոց պատմության հիմնահարցեր- 2	2	+							+				+				+
Փիլիսոփայության հիմունքներ	4														+	+	+
Ֆիզդաստիարակություն	0																
Տնտեսագիտություն	2								+				+				+
Քաղաքագիտություն									+				+				+
Իրավագիտություն									+				+				+
Մշակութաբանություն		+													+		+
Կրոնների պատմություն	2	+													+		+
Համակարգչից օգտվելու հմտություններ	2					+	+						+				
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2																+
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4																+

Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	2																+
Մաթեմատիկայի հիմունքներ	2						+						+				+
Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն – 1	4			+				+	+				+				
Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն – 2	4			+				+	+				+				
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 1	5			+				+	+				+				
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 2	5			+				+	+				+				
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն – 1	4			+				+	+				+				
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն – 2	4			+				+	+				+				
Արևմտահայերեն	4			+				+	+				+				
Հայոց լեզվի ոճագիտություն	5	+		+				+	+				+				
Գրաբար -1	3	+		+		+		+	+	+				+			
Գրաբար -2	3	+		+		+		+	+	+				+			
Գրաբար -3	3	+		+		+		+	+	+				+			
Հայոց լեզվի պատմություն -1	4	+	+		+		+	+	+								
Հայոց լեզվի պատմություն -2	4	+	+		+		+	+	+								
Բարբառագիտության հիմունքներ	2	+			+			+	+								
Լեզվաբանության հիմունքներ	4	+	+	+	+		+						+	+			+
Ընդհանուր լեզվաբանություն	4		+	+	+		+						+	+			+
Հայ ժողովրդի բանահյուսություն	5			+	+								+	+			+

Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն	7	+		+								+	+			
19-րդ դարի հայ գրականության պատմություն -1	5	+		+								+	+			
19-րդ դարի հայ գրականության պատմություն -2	7	+		+								+	+			
19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն -1	6	+		+								+	+			
19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն -2	6	+		+								+	+			
Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն	10	+		+			+					+	+			
Արդի հայ գրականության պատմություն	5	+		+			+					+	+			
Հայ գրաքննադատության պատմություն	5		+	+	+	+		+		+	+		+			
Անտիկ և վերածննդի արտասահմանյան գրականության պատմություն	5	+		+			+					+	+			
17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն	6	+		+			+					+	+			
19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն	4	+		+			+					+	+			
Գրականագիտության ներածություն	2	+	+	+	+	+		+		+	+		+			
Գրականության տեսություն	5		+	+		+		+		+	+		+			
Ռուս գրականության պատմություն	4	+		+			+					+	+			
Տրամաբանություն	3										+	+	+			+

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ**

0305/B07	Ռուսաց լեզու-1	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել ռուսաց լեզվի համակարգը, ձևավորել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ՝ տարբեր լեզվական ոլորտներում հաղորդակցվելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • Կիմանա ծրագրով նախատեսված քերականական նյութը • Կունենա ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար • Կիմանա ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • վերլուծելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր: ✓ (ընդհանրական կարողություններ) • Ընթերցելու ռուս դասականների ստեղծագործությունները բնագրով • պատկերացում կազմելու ռուսերենի և հայերենի ընդհանրությունների ու տարբերությունների մասին:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1.Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Թեմա 2.Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Թեմա 3.Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին. մենիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Թեմա 4.Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Թեմա 5. Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:		

Գնահատման մեթոդները և չափանիշները <i>Ստուգարքի անցկացման ձևը.</i> Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: Հիմնական գրականության ցանկը 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Хавроница С.А., Широценская А.И. Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005

0305/B08	Ռուսաց լեզու-2	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում: Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները. • կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին. • կտիրապետի մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքներին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • վերաբրտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ, • թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • Ինքնուրույն կատարելու ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի գուգադրական վերլուծություն: Համառոտ բովանդակությունը Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: Թեմա 1.Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Թեմա 2.Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: Թեմա		

3. Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: **Թեմա 4.** Բարդ նախադասություն. բարդ նախադասության դասակարգումը: **Թեմա 5.** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

Գնահատման մեթոդները

Ստուգարքի անցկացման ձևը.

Ստուգարքն անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Хавронина С.А., Широценская А.И. Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005.

0305/B09	Ռուսաց լեզու-3	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
3-րդ կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվահան հմտությունները՝ ձևավորել մասնագիտական լեզվի և մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու իմացություն և կարողություն:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
Կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգին		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
- մեկնաբանելու և վերարտադրելու մասնագիտական տեքստեր, - ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ՝ մասնագիտական թեմայով, - կազմելու զեկուցումներ և ռեֆերատներ՝ մասնագիտական թեմաներով, - թարգմանելու տարբեր բարդության մասնագիտական տեքստեր:		

տեր: ✓ (ընդհանրական կարողություններ) • Հաղորդակցվելու ռուսական մշակույթին, ռուսական գրականությանը, • ինքնուրույն կատարելու ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն, • մասնակցելու լեզվական նյութին առնչվող քննարկումներին.
Համառոտ բովանդակությունը Թեմա 1. Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Թեմա 2. Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: Թեմա 3. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:
Գնահատման մեթոդները <i>Քննության անցկացման ձևը.</i> Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը՝ /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/ 8 միավոր:
Հիմնական գրականության ցանկը 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Хавронина С.А., Широценская А.И. Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005.

0304/B01	Հայոց պատմության հիմնահարցեր -1	2 կրեդիտ
2 Ժամ	24/8/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնելու ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնելու մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ամբողջական լուսաբանման վրա:		

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կլիմային հայոց հին ու միջնադարյան պատմությունը,
- յուրացրած կլիմային հայոց պետականությունների պատմությունը:

Ունակ կլինի.

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- քննադատական վերաբերմունք հանդես բերելու հայոց պատմության հին ու միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,

✓ (ընդհանրական կարողություններ)

- ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնելու ունեցած գիտելիքները,
- վերլուծելու փաստերը և հետևություններ անելու,
- զեկուցումներ պատրաստելու ու գիտական բանավեճեր վարելու:

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: **Թեմա 2.** Հայաստանը հնագույն շրջանում: Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VI դդ.): **Թեմա 3.** Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): **Թեմա 4.** Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-V դդ.): Հայաստանը վաղ միջնադարում: **Թեմա 5.** Հայաստանը զարգացած միջնադարում: Հայաստանը ուշ միջնադարում:

Գնահատման մեթոդները

Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցման ձևով: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Երևան, 1975:
2. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/, Երևան, 2008:
3. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., Երևան, 1971:
4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981:
5. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984:

6. Պողոսյան Ս., Ասրյան Ա., Ստեփանյան Խ., Հովհաննիսյան Է., Հայոց պատմություն, Երևան, 2009:

0304/B02	Հայոց պատմության հիմնահարցեր -2	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
II կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցելու հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմության վերլուծության վրա:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • Ծանոթ կլինի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • վերլուծելու հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմությունը և դասեր քաղելու անցյալի սխալներից, • գիտելիքները լայնորեն օգտագործելու իր աշխատանքային, հատկապես կրթական գործընթացներում: ✓ (ընդհանրական կարողություններ) • ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնելու ունեցած գիտելիքները, • վերլուծելու փաստերը և հետևություններ անելու, • գեկուցումներ պատրաստելու ու գիտական բանավեճեր վարելու:		
Համառոտ բովանդակությունը Թեմա1. Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: Թեմա 2. Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ. - 20-րդ դ. սկիզբ): Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 3. Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնա-		

պաշտպանական մարտերը: Թեմա 4. 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: Թեմա 5. Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Գնահատման մեթոդները Հանրագումարային քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ 7,7,6 միավոր արժեքով: Հիմնական գրականության ցանկը 1. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Երևան, 1975: 2. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/, Երևան, 2008: 3. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., Երևան, 1971: 4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981: 5. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984: 6. Պողոսյան Ս., Ասրյան Ա., Ստեփանյան Խ., Հովհաննիսյան Է., Հայոց պատմություն, <i>Երևան, 2009:</i>

0304/B05	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	45/15	
3-րդ, 4-րդ կիսամյակներ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին: Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ ա-		

ռանձնահատկությունները. - կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը. <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - վերլուծելու և ամբողջական պատկերացում կազմելու արդի քաղաքակրթական, քաղաքական-մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կատարելու սոցիալ-փիլիսոփայական ընդհանրացումներ և կիրառելու համապատասխան մեթոդներ. - իմաստավորելու աշխարհի գիտական պատկերը և մարդու կոչումն ու կյանքի իմաստը:		
<i>Համատոտ բովանդակությունը</i> Փիլիսոփայության առարկան: Կեցություն և մատերիա: Դիալեկտիկա: Բնություն: Մարդ և պրակտիկա: Գիտակցություն և ճանաչողություն: Գիտություն: Հասարակություն: Մշակույթ: Անձ: Ապագա:		
<i>Գնահատման մեթոդները</i> Բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004: 2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, հ.1., Երևան, 1987: 3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, հ.2., Երևան, 1987: 4. Գաբիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1976: 5. Հակոբյան Ս., Փիլիսոփայության հիմունքներ, Երևան, 1994:		

0305/B04.	Անգլերեն լեզու-1	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
1-ին կիսամյակ	Մոնոգրաֆ	
Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտե-		

լիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - Հարուստ բառապաշարի, քերականության հաստուկ բարդություն ունեցող երևույթների իմացություն: <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • Կառուցելու անգլերեն բանավոր և գրավոր խոսք: ✓ (ընդհանրական կարողություններ) • վերարտադրելու անգլերեն տեքստեր, ազատ հաղորդակցվելու անգլերենով՝ բանավոր և գրավոր ընդհանուր բնույթի տարբեր թեմաների շուրջ:		
Համառոտ բովանդակություն Թեմա 1.Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2.Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3.Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:		
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգաքնն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		
Հիմնական գրականության ցանկը 1. S. Evinyan, S.Abrahamyan, E. Temrazyan, <English for Tourists and Travellers>, Yerevan, 2011. 2. Swan M., Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005. 3. Цветкова И.В., <Английский язык>/Тоники и тексты/, Москва, 2000.		
0305/B05.	Անգլերեն լեզու-2	4 կրեդիտ

4 ժամ	0/64/0
2-րդ կիսամյակ	Մտուգարք
Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:	
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտություններ: • կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • համակարգելու նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա: • ընկալելու ունկնդրած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • վերարտադրելու մասնագիտական անգլերեն տեքստեր, ընկալելու լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:	
<i>Համառոտ բովանդակությունը</i> Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում՝ հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: Թեմա 5. Մասնագիտական լեզ-	

վի տերմինաբանական համակարգ:
<i>Գնահատման մեթոդները և չափանիշները</i> Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Soars J., Soars L., New Headway. Intermediate. 3rd Edition. Oxford: Oxford University Press, 2009. 2. Swan M., Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005. 4. S. Evinyan, S. Abrahamyan, E. Temrazyan, <English for Tourists and Travellers>, Yerevan, 2011. 5. Swan M., Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005. 6. Цветкова И.В., <Английский язык>/Тоники и тексты/, Москва, 2000.

0305/B06.	Անգլերեն լեզու-3	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
3-րդ կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է նոր, առավել հագեցած բառապաշարի և գիտելիքների ձևավորումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտություններ:		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
- հասկանալու և ամբողջապես ըմբռնելու լսված նյութի հիմնական բովանդակությունը, - արգմանելու մասնագիտական տեքստը հայերենից անգլերեն և հակառակը, - ինքնուրույն կազմելուկապակցված տեքստ՝ մասնագիտական թեմայով:		

✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • հաղորդակցվելու անգլերենով մասնագիտական բնույթի տարբեր թեմաների շուրջ, կատարելու գործարար նամակագրություն (համառոտագրություն, ինքնակենսագրություն /CV/, դիմում):		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1. Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: Թեմա 2. Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: Թեմա3. Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: Առաջարկվող թեմաներ՝ «Մերրոնդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար՝ նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն:		
Գնահատման մեթոդները Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:		
Հիմնական գրականության ցանկը 1. S. Evinyan, S. Abrahamyan, E. Temrazyan, «English for Tourists and Travellers», Yerevan, 2011. 2. Swan M., Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005. 3. Цветкова И.В., «Английский язык»/Тоники и тексты/, Москва, 2000.		

0305/B01.	Օտար լեզու -1 /Ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականություն և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. Գիտելիք և իմացություն • ֆրանսերենի արտասանական նորմերի, հնչյունական համա-		

կարգի և հնչյունական յուրահատկությունների մասին. • կիմանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, • ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները՝ դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ինքնուրույն կերպով կատարելու տեքստի ձևաբանական վերլուծություն, • ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:	<i>Համառոտ բովանդակությունը.</i> Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա2. Հատուկ և հասարակ գոյական: Թեմա 3. Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա4 Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա5. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Թեմա 6. Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Քանակական և դասական թվական: Թեմա 7. Քանակական թվականի գործածությունը: Թեմա 8. Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:
<i>Գնահատման մեթոդները</i> Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:	<i>Հիմնական գրականության ցանկը.</i> 1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва 2008. 2. M. Gregoire, Od. Thievenaz «Grammaire progressive du francais» (Niveau debutant). 3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau d'nbu-

tant).

0304/B10.	Օտար լեզու -2 /ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	0/64/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> - կիմանա ճիշտ արտասանել ֆրանսերենի հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - լսելով հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), գրույց վարելու անցած թեմաներով: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - ինքնուրույն կերպով կատարելու տեքստի շարահյուսական վերլուծություն. - ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:		
<i>Համառոտ բովանդակությունը.</i> Թեմա 1.Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funeraillles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse-croute և այլն): Թեմա 2.Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից՝ un homme grand-un grand homme. Թեմա 3.Անորոշ դերանվանական ածականներ: Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, le quel և այլն (դասակարգում): Թեմա 4.Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի		

խոսքում:
Գնահատման մեթոդները Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկը. 1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008. 2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau debutant). 3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant).

0304/B03.	Օտար լեզու -3 /Ֆրանսերեն/	4 կրեդիտ
4 ժամ	0/60/0	
3-րդ կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
կիմանա իր մասնագիտական հիմնական տերմինների նշանակությունը՝ ներառյալ երկրորդ կիսամյակում սովորած 300 միավոր տերմինոլոգիան,		
<i>Ունակ կլինի</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
- առանց բառարանի կարդալու միջին բարդության մասնագիտական տեքստեր, - առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության հասարակական–քաղաքական բովանդակությամբ տեքստեր:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:		
Համառոտ բովանդակությունը.		
Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային		

(բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2.** Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ *indicatif* (սահմանական եղանակ), *conditionnel* (պայմանական եղանակ), *subjonctif* (ըզձական եղանակ), *imperatif* (հրամայական եղանակ): **Թեմա 3.** Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

Գնահատման մեթոդները

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել մասնագիտական թեմայով անծանոթ տեքստը, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը, երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

Հիմնական գրականության ցանկը.

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008.
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. M. Djoulhakian, R. Meliksntian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

0304/F06.	Կրոնների պատմություն	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	(30/0/0)	
III կիսամյակ	Ստուգաթղթ	
Դասընթացի նպատակն է ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դեմոֆինացիաների վերաբերյալ:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև՝ Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը.		

- կիսականա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - կատարելու տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում: ✓ (ընդհանրական կարողություններ) - տալ կրոնների համակարգային վերլուծության և ընդհանրացման սահմանները:
<i>Համառոտ բովանդակությունը</i> Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա2. Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Թեմա3. Բուդդայականություն, իսլամ դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա4. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա5.. Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:
<i>Գնահատման մեթոդները</i> Ստուգումն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002: 2. Աստվածաշունչ: 3. Գուրան, Սոֆիա, 1929: 4. Երուանդ Վրդ. Տեր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, /Հին եկեղեցին/, Էջմիածին, 1908: 5. Религиоведение, (учеб. Под общ. Ред. М. М. Шахнович), СПб, 2007. 6. Классики мирового религиоведения. Антология. Т.1, М. 1996. 7. Մադաթիա արք. Օրմանյան, Ազապատում, հ. Ա-Գ, Երևան, 2001: 8. Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան, Երևան, 2002:

0202/ B01	Մշակութաբանություն	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
III կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, մշակութային գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա մշակութային գործընթացների վրա:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն.</i> • «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների, մշակույթի առաջացման և զարգացման տեսությունների մասին, • մշակույթի կառուցվածքի, բաղադրիչների, տիպաբանության, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին, • համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ: <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ներկայացնելու մշակույթի ընդհանրական բնութագիրը, նրա առանձին բաղադրիչներն ու դրսևորումները, • ճանաչելու և իրարից զանազանելու համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները, • հասկանալու մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ընկալելու սեփական մասնագիտական գործունեությունը որպես ընդհանրական մշակութային գործընթացի բաղկացուցիչ, • կիրառելու մշակույթի մասին ստացած գիտելիքները կոնկրետ մասնագիտական ոլորտում:		
Համառոտ բովանդակությունը. Թեմա1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի		

էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Թեմա 2. Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Թեմա 3. Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները. մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: Թեմա 4. Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:
Գնահատման մեթոդները Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
Հիմնական գրականության ցանկը. 1. Սարգսյան Ա., Մշակութաբանություն, Ե., 1996: 2. Գուրևիչ Պ., Մշակութաբանություն, Ե., 2002: 3. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Ե., 2001: 4. Հովհաննիսյան Ս., Կուլտուրան և բնությունը, Ե., 1996: 5. Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004.

0304/B03.	Քաղաքագիտություն	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
IV կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաներին ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերի մասին. • կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ. <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կողմնորոշվելու գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում.		

✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>
• պատկերացում կազմելու քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին.
Համառոտ բովանդակություն Թեմա 1.Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Թեմա 2. Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 3.Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 4. Ընտրություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարախոսություններ: Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:
Գնահատման մեթոդները Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
Հիմնական գրականության ցանկը 1. Խրոպանյուկ Վ., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997: 2. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002: 3. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Երևան, 2003:

0201/B01	Տնտեսագիտություն	(2 կրեդիտ)
2 Ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i>		

- տնտեսագիտության հիմունքների վերաբերյալ:
- շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին:

Ունակ կլինի.

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- հասկանալու իր մասնագիտության շրջանակներում առաջացող տնտեսագիտական տարատեսակ խնդիրները և միջոցներ ձեռնարկելու դրանց լուծման ուղղությամբ:
- վերլուծելու երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը և կանխատեսելու դրա հավանական ազդեցությունը իր մասնագիտական գործունեության ոլորտի վրա:

✓ (ընդհանրական կարողություններ)

- վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակները:

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1.Տնտեսագիտության առարկան և մեթոդները: Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 2.**Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Սպառողի վարքի տեսություն: Արտադրության ծախսերը: Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 3.**Ձեռնարկությունների և կազմակերպությունների տիպերը և տեսակները: Ռեսուրսների գնեքի ձևավորումը: Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Մակրոտնտեսական վերլուծություն: **Թեմա 4.**Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: Տնտեսական աճ: **Թեմա 5.**Միջազգային առևտրի տեսություն: Միջազգային տնտեսական գործակցություն: Անցումային տնտեսության հիմունքներ: Կոռուպցիայի տնտեսական պատճառները և դրա դեմ պայքարի մեթոդները անցումային տնտեսությունում:

Գնահատման մեթոդները

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Փոլ Ա. Մամուլեյսոն, Տնտեսագիտություն, 1-ին հատոր, Երևան,

1995:

2. Ջեյմս Դ. Գոոթնի և ուրիշներ, Տնտեսագիտություն, Երևան, 1999:
3. Աղաջանյան Հ.Բ., Միկրոէկոնոմիկա, Եր., 2010 :
4. К.Р.Макконнелл, С. Л. Брю, Флин, Экономикс. 13-е издание, Москва, 1999.
5. Курс экономической теории /под ред. Сидоровича, Е. Л. Киселевой, Киров, 1995.

0104/B02	Համակարգչից օգտվելու հմտություններ	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	8/24/0	
I կիսամյակ	Մտուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր՝ համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • համակարգչի կառուցվածքի և նրա աշխատանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ: • օպերացիոն համակարգից, բազմախնդրայնության, տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերության: • Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերով աշխատելու հիմնական սկզբունքների վերաբերյալ: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ինքնուրույն կատարելու իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, գեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն): ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները առկա խնդիրները լուծելիս:		
<i>Համառոտ բովանդակությունը</i>		

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: **Թեմա 2.** Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: **Թեմա 3.** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: **Թեմա 4.** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Գնահատման մեթոդները
Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անցկացվում է համակարգչի վրա: Ուսանողին տրվում են հանձնարարություններ՝ ըստ դասընթացի ընթացքում անցած թեմաների:

Հիմնական գրականության ցանկը
1. Краинский И.2007.-СПБ, Питер-2008, 240с.,ил. /Серия «Популярный самоучитель»/. Эл. Книга.
2. Ю. Стоцкий, Office 2007, Питер, 2007.
3. Առաջադրանքներ՝ էլեկտրոնային կրիչով:

0105/B01	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• Էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումների, օրենքների, հարցերի վերաբերյալ:		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
• օգտագործելու այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում, • կատարելու անհրաժեշտ վերլուծություն:		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		

- վերլուծություններ կատարելու էկոլոգիական վիճակի մասին և կատարելու համապատասխան եզրակացություններ:

Համառոտ բովանդակություն

Թեմա 1. Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: **Թեմա 2.** Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: **Թեմա 3.** Կենսատերկրաքիմիական ցիկլեր: Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: **Թեմա 4.** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: Պոպուլյացիոն էկոլոգիա: Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Գնահատման մեթոդները

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010:
2. Մարտիրոսյան Մ., Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ., Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007.
3. Մելքոնյան Լ. Էկոլոգիայի հիմունքներ, Երևան, 2008:
4. Փիրումյան Գ.Պ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010:
5. Маврищев В.В., Основы общей экологии, Минск, 2000.
6. Демина Т.А., Экология, природопользование, охрана окружающей среды, “Аспект пресс”, М., 2000.
7. Воронцов Н.Н. и др., Эволюция органического мира, М., 2000.
8. Воронков Н.А., Основы общей экологии, “Агар”, М, 1999.
9. Гирусов Э.В. и др., Экология и экономика природопользования, М., 1998.
10. Грант В., Эволюционный процесс, “Мир”, М., 1989.
11. Бигон М. и др., Экология, “Мир”, М., 1989.
12. Одум Ю., Основы экологии, “Мир”, М., 1975.

0001/B05	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4 կրեդիտ
2 ժամ	30/30/0	
5 կիսամյակ	ստուգարք	
Դասընթացների նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - կկարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնի պաշտպանվելու ձևերն ու մեթոդները: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մեթոդները: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1.Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքը և խնդիրները: Արտակարգ իրավիճակների, նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: Թեմա 2.Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 3.Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 4.Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 5.Արտա-		

կարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 6.** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **Թեմա 7.** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 8.** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 9.** Սուր հիվանդություններ և թունավորումներ: Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 10.** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Գնահատման մեթոդները

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցաթերթիկներով: Հարցաթերթիկը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը՝ գործնական:

Հիմնական գրականության ցանկը

1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Ց., Վարդանյան Ջ.Հ., Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր, Երևանի համալս. հրատ., 2006:
- Առաջին օգնության տարրերը: Հայկական կարմիր խաչի ընկերություն. մարդասիրության ուժը:
3. Հեղինակային խումբ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., 2007:
4. Կ. Ա. Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2007:
5. Ադամյան Մ.Խ., «Փոխադրական անշարժացում», ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011:
2. 6. Ուսումնական ձեռնարկ բուժքույրերի պատրաստման համար, Երևան, «Լույս» հրատ., 1983:
3. Л.А.Николаев, “Основы защиты от оружия массового поражения”, Минск, “Вышэйшая школа”, 1988.
4. “Это должен знать и уметь каждый”, серия “Гражданская оборона СССР”, М., Воениздат, 1985.

5. В.М.Емельянов, В.Н.Коханов, П.А.Некрасов, “Защита населения и территорий в чрезвычайных ситуациях”, М.: Академический Проект: Трикта, 2005.

0105/B01	Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կիսամյակ	Մտուգաբք	
Դասընթացի նպատակն է հումանիտար մասնագիտություն ընտրած ուսանողների մոտ ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> - բնագիտության զարգացման հիմնական փուլերի, բնագիտության հիմնական սկզբունքների, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաների մասին: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> - հասկանալու բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> - կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից օգտվելով՝ կատարելու վերլուծություններ , ստեղծագործել՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:		
<i>Համառոտ բովանդակությունը</i> Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի		

նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Գնահատման մեթոդները

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էվոլյուցիայի և բնության պահպանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ-97, 2010.
2. Канке В.А., Концепции современного естествознания, М.: Логос. 2002.
3. Буданов В.Г., Мелехова О.П., Концепции современного естествознания. МГТУГА. 1998.
4. Дубнищева И.А., Концепции современного естествознания. Новосибирск, ЮКЭА: 1997.
5. Степин В.С., Кузнецова Л.И., Современная научная картина мира. М.: Наука, 1997.

6. Курдюмов С.П., Князева Е.Н., Законы эволюции и самоорганизации сложных систем. М.: Наука, 1994.
7. Миллер Т., Жизнь в окружающей среде, М.: Пангея. 1994.
8. Небел Б., Наука об окружающей среде. Как устроен мир. М.: Мир, 1993

0101/B01	Մաթեմատիկայի հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
1-ին կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացումը, վերացական մտածողության ձևավորումը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
կտիրապետի հանրակարթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցերի.		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
մոդելավորելու առօրեական բնույթի որոշ խնդիրներ և լուծել:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
անհրաժեշտության դեպքում կիրառելու պարզագույն օրենքներն ու բանաձևերը մասնագիտական որոշ հարցերի հետազոտման մեջ:		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1.Բազմությունների տեսության տարրերը: Մատրիցներ և որոշիչներ: Մաթեմատիկական ինդուկցիա: Կոորդինատների մեթոդը:		
Թեմա2. Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: Մաթեմատիկական մոդելավորում: Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկայում: Թեմա 3.Հավանականությունների տեսության տարրերը: Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: Թեմա 4.Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզուն:		
Գնահատման մեթոդները		
Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով:		
Հիմնական գրականության ցանկը		
1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004:		
2. Тихомиров Н. Б., Шелехов А. М., Математика, Учебный курс для		

0302/B 13	Գրաբար -1	3 կրեդիտ
Շաբաթական 3 ժամ	45(0/45/0)	
I կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական, բառային և ձևաբանական իրողությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
- գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշների վերաբերյալ, - գրաբարյան բնագրերը վարժ կարդալու և հասկանալու համար:		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
կատարելու գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային վերլուծություններ:		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		
ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները, պատշաճ մակարդակով պատրաստելու կուրսային աշխատանքներ:		
Համառոտ բովանդակություն		
Թեմա 1. Գրաբարը որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: Թեմա 2. Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: Թեմա 3. Գրաբարի դերբայները: Թեմա 4. Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները: Թեմա 5. Գրաբարի անկանոն բայերը: Գրաբարի պակասավոր բայերը: Թեմա 6. Պատճառական բայեր: Գրաբարի բաղադրյալ ժամանակները:		
Գնահատման մեթոդները		
Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.		

<i>1-ին ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
<i>2-րդ ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ Եր. 2003: 2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 1977: 3. Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Զ հատ., Եր. 1974: 4. Գ. Թոսունյան, Լ. Խաչատրյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 2004: 5. Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր. 1975: 6. Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր. 2008: 7. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 2004:

0302/B14	Գրաբար -2	3 կրեդիտ
Շաբաթական 3 ժամ	45(0/45/0)	
II կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրաբարի բառային և ձևաբանական իրողությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
- գրաբարի բառային և ձևաբանական հատկանիշների վերաբերյալ, - հին հայերենի բնագրերը հասկանալու և թարգմանելու համար:		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
կատարելու գրաբարյան բնագրերի բառապաշարային և ձևաբանական վերլուծություններ:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները, պատշաճ մակարդակով պատրաստելու մասնագիտական զեկուցումներ:		
Համառոտ բովանդակություն		
Թեմա 1. Գրաբարի անվանական հոլովումը: Հոլովները և նրանց կազմությունը. հոլովման համակարգի տարբերությունն աշխարհաբարի համեմատությամբ: Թեմա 2. Պարզ հոլովումներ. Ա, Ե, Ի, Ո, ՈՒ հոլովումներ: Խառը հոլովումներ. Ի-Ա, Ո-Ա հոլովումներ: Թեմա 3. Անկանոն հոլովումներ: Թեմա 4. Ածական անուն: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Թեմա 5. Թվական անուն:		
Գնահատման մեթոդները		

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են. <i>1-ին ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է: <i>2-րդ ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:		
Հիմնական գրականության ցանկը 1. Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003: 2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1977: 3. Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Զ հատ., Եր., 1974: 4. Գ. Թոսունյան, Լ. Խաչատրյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004: 5. Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1975: 6. Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008: 7. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:		
0302/Բ15	Գրաբար -3	3 կրեդիտ
Շաբաթական 3 ժամ	45(0/45/0)	
III կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշների վերաբերյալ: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • ունակ կլինի կատարելու գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները , պատշաճ մակարդակով պատրաստելու մասնագիտական զեկուցումներ:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1.Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: Թեմա 2.Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: Թեմա 3.Ստացական և փոխադարձ դերանուններ: Թեմա 4. Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Թեմա		

5.Մակբայների տեսակներն ու կազմությունը գրաբարում: Թեմա 6. Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:
<i>Գնահատման մեթոդները</i> Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են. <i>1-ին ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է: <i>2-րդ ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 2003: 2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 1977: 3. Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Զ հատ., Եր.1974: 4. Գ. Թոսունյան, Լ. Խաչատրյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004: 5. Պ. Շարափխանյան, Գրաբարի դասընթաց, Եր. 1975: 6. Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր. 2008: 7. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր. 2004:

0302/Բ03.	Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն - 1	4 կրեդիտ
4 ժամ	15/45 /0	
1 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:		
<i>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</i> <i>Գիտելիք և իմացություն</i> • ժամանակակից հայերենի հնչյունների հատկանիշների ու դասակարգման սկզբունքների, բառապաշարի ընդհանուր հատկանիշների վերաբերյալ. • հնչյունափոխական առանձնահատկությունների, գրանշանների և հնչյունների փոխհարաբերության վերաբերյալ.		

Ունակ կլինի

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- կատարելու բառերի հնչյունաբանական վերլուծություններ:

✓ (ընդհանրական կարողություններ)

- կատարելու ուղղագրական աշխատանքներ

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում. հայերենի զարգացման փուլերը: **Թեմա 2.** Հայերենի հնչյունական համակարգը. այբուբենի հատկանիշները: **Թեմա 3.** Հնչյուն և հնչույթ. հնչույթ և գրանշան: **Թեմա 4.** Հայնավորների դասակարգումը. բաղաձայնների դասակարգումը: **Թեմա 5.** Շեշտը հայերենում. վանկ. տողադարձ: **Թեմա 5.** Հնչյունափոխությունը և նրա տեսակները: **Թեմա 6.** Հայերենի ուղղագրության սկզբունքները. ուղղագրական բարեփոխումներ:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, 2 հատոր, Եր., 1974:
3. Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990
4. Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս. Ա պրակ, Եր., 1980:
5. Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1974:
6. Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:
7. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 3-րդ, Եր., 1957, էջ 27/147, հտ. 6-րդ, 1976:
8. Ս. Գյուլբուղադյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1972:

0302/Բ04.	Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն - 2	4 կրեդիտ
4 ժամ	15/45/0	
2-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշների, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքների, բառակազմական օրինաչափությունների վերաբերյալ. • բառերի ստուգաբանական իմաստների, բառիմաստի պատմական փոփոխությունների վերաբերյալ.		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կատարելու բառակազմական վերլուծություններ, ճիշտ կիրառելու ձևաիմաստային տարբեր խմբերի բառերը:		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• կատարելու բառագիտական աշխատանքներ:		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1.Բառագիտություն. նրա ենթաբաժինները: Թեմա 2.Բառային մենիմաստություն և բազմիմաստություն. բառիմաստի փոփոխություն. բառերի ձևաիմաստային խմբերը: Թեմա 3.Բառապաշար. նրա հատկանիշները: Բառապաշարի շերտերը և դրանց դասակարգումը: Թեմա 4.Բառակազմություն: Ձևույթը և նրա տեսակները: Թեմա 5.Բարդություններ, նրանց տեսակները: Թեմա 6.Դարձվածաբանություն. դարձվածային միավորների հատկանիշները և դասակարգումը: Թեմա 7. Բառարանագրություն. բառարանների տիպերը:		
Գնահատման մեթոդները		
Ընթացիկ քննություններ		
Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:		
Եզրափակիչ քննություն		
Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն ար-		

Ժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,2,3,3 միավոր: Միավորների քայքայ 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Զ հատոր, Եր., 1974:
3. Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, 1991
4. Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս., Ա պրակ, Եր., 1980:
5. Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1974:
6. Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:
7. Հր. Աճառյան, լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 3-րդ, Եր., 1957, էջ 27/147, հտ. 6-րդ, 1976:
8. Ս. Գյուլբուղդյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1972:

0302/Բ05.	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 1	5 կրեդիտ
5 ժամ	30/45/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշների վերաբերյալ. • խոսքի մասերի դասակարգման սկզբունքների, քերականական կարգերի տարբերակման չափանիշների մասին.		
<i>Ունակ կլինի</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կատարելու ձևաբանական վերլուծություններ:		
✓ (ընդհանրական կարողություններ)		

- Ճիշտ կիրառելու ձևաբանական գուգաձևությունները:

Համառոտ բովանդակությունը

Թեմա1. Ձևաբանությունը՝ որպես լեզվաբանության բաժին. քերականական կարգեր. քերականական ձև, իմաստ և պաշտոն: **Թեմա 2.** Խոսքի մասերի դասակարգման հիմունքները. թեքվող և չթեքվող խոսքի մասեր: **Թեմա3.** Գոյական. գոյականի թվի, հոլովի, առկայացման կարգերը. իմաստային-քերականական խմբերը: **Թեմա 4.** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: **Թեմա 5.** Թվական. տեսակները և կազմությունը: **Թեմա 6.** Դերանուն. նրա տեսակները և դրանց քերականական հատկանիշները: **Թեմա 7.** Բայ: Բայերի կազմությունը, բայահիմքեր, դերբայներ:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970, 1973, 1977:
2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու /Ձևաբանություն/, Եր., 1984:
3. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965:
4. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հատոր 2, Եր., 1974:
5. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի ձևաբանություն, Եր., 2011:

0302/Բ06.	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 2	5 կրեդիտ
5 ժամ	30/45/0	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, բայ, մակբայ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի հատկանիշները, ու-		

սուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը: Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշների վերաբերյալ. • խոսքի մասերի դասակարգման սկզբունքների, քերականական կարգերի տարբերակման չափանիշների մասին. <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կատարելու ձևաբանական վերլուծություններ. ✓ (ընդհանրական կարողություններ) • ճիշտ կիրառելու ձևաբանական գուգաձևությունները:
Համառոտ բովանդակությունը Թեմա1. Բայ. բայի քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ, եղանակային ձևեր: Թեմա 2. Մակբայ. նրա տեսակները և կազմությունը: Թեմա 3. Կապ. նրա տեսակները. դասակարգման սկզբունքները: Թեմա 4. Շաղկապ. նրա տեսակները: Թեմա 5. Վերաբերական. նրա տեսակները: Թեմա 6. Չայնարկություն. նրա տեսակները:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ընթացիկ քննությունները գրավոր են, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: 4 միավորն ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից, 1 միավորը՝ գործնական պարապմունքներից ստացած գնահատականներից հանված միջինից (5-ի դեպքում՝ 1, 4-ի դեպքում՝ 0,75, 3-ի դեպքում՝ 0,5, 2-ի կամ գնահատականի բացակայության դեպքում՝ 0): Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):
Հիմնական գրականության ցանկը 1. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970, 1973, 1977:

2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու /Ձևաբանություն/, Եր., 1983:		
3. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965:		
4. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հատոր 2, Եր., 1974:		
5. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի ձևաբանություն, Եր., 2011:		
0302/Բ07.	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն - 1	4 կրեդիտ
4 ժամ	30/30/0	
5-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգն իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության հատկանիշները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
• ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշների վերաբերյալ. • Նախադասության անդամների որոշման սկզբունքների, նախադասության տարբեր տեսակների առանձնահատկությունների մասին.		
Ունակ կլինի		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
• կատարելու շարահյուսական վերլուծություններ.		
✓ (ընդհանրական կարողություններ)		
• ճիշտ կիրառելու կապակցման միջոցներն ու եղանակները:		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1.Շարահյուսությունը՝ որպես լեզվաբանության բաժին. շարահյուսական կաղապարներ և մակարդակներ: Բառերի կապակցման միջոցներն ու եղանակները:Թեմա 2.Բառակապակցություն. նրա դասակարգման սկզբունքները: Թեմա 3.Նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա հատկանիշները. տեսակները: Թեմա 4.Պարզ նախադասության կառուցվածքը: Նախադասության գլխավոր անդամներ: Ենթակայի արտահայտությունը: Ստորոգյալի արտահայտությունը. տեսակները: Թեմա 5.Գոյականական անդամի լրացում-		

ներ: **Թեմա 6.** Բայական անդամի լրացումներ: Բազմակի անդամներ: Դերբայական դարձված: **Թեմա 7.** Պարզ նախադասության անդամների և հարակից միավորների շարադասությունը:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/, Եր., 1987:
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965:
3. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:
4. Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:
5. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարադասությունը և նրա ուսուցումը, /պարզ և բարդ նախադասություններ/, Եր., 1982:
6. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., 1976:
7. Մ. Գյուլբուրդյան, Ժամանակակից հայոց լեզու, /շարահյուսություն/, Եր., 1988:
8. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009:

0302/Բ08.	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն - 2	5 կրեդիտ
4 ժամ	30/30/0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը, ուսուցանել բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները, բազմաբարդ նախադասությունն իր տեսակներով, բարդ նախադասության փոխակերպումները, ուղղակի և անուղղակի խոսքերը և նրանց կետադրությունն ու փոխակերպումները, հայերենի կետադրությունը:		

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշների մասին.
- Բարդ նախադասության կառուցվածքային տեսակների որոշման սկզբունքների, բաղադրիչ նախադասությունների շարահյուսական գործառույթների վերաբերյալ.

Ունակ կլինի

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- կատարելու շարահյուսական վերլուծություններ.

✓ (ընդհանրական կարողություններ)

- որոշելու ստորադաս նախադասությունների շարահյուսական գործառույթները:

Համառոտ բովանդակությունը

Թեմա1. Բարդ նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա հատկանիշները: Համադասություն և ստորադասություն: Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները: **Թեմա 2.** Բարդ համադասական նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա հատկանիշները: **Թեմա 3.** Բարդ ստորադասական նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա հատկանիշները: **Թեմա 4.** Ենթակա և ստորոգելի ստորադաս նախադասություններ: **Թեմա 5.** Գոյականական անդամի լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 6.** Բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 7.** Բազմաբարդ նախադասություններ: Ուղղակի և անուղղակի խոսք: Փոխակերպում: Կետադրություն:

Գնահատման մեթոդները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գնահատվում են յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Տարբերակը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

Հիմնական գրականության ցանկը

1. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսութիւն/, Եր., 1987:		
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965:		
3. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:		
4. Գ. Գաբեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:		
5. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահայտությունը և նրա ուսուցումը, /պարզ և բարդ նախադասություններ/, Եր., 1982:		
6. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., 1976:		
7. Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, /շարահյուսություն/, Եր., 1988:		
8. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009:		
0302/Բ16.	Արևմտահայերեն	4 կրեդիտ
4 ժամ	30/30/0	
6-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, արևելահայերենի և արևմտահայերենի միջև եղած տարբերությունները և նմանությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• արևմտահայերենի ձևավորման, հնչյունական, բառային և քերականական հատկանիշների վերաբերյալ. • արևմտահայերենի ու արևելահայերենի միջև եղած տարբերությունների ու նմանությունների մասին.		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
• հասկանալու և վերլուծելու արևմտահայերեն տեքստեր, հաղորդակցվելու արևմտահայերենով:		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		
• կատարելու լեզվական վերլուծություններ.		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1. Հայերենի զարգացման փուլերը. Աշխարհաբարի կազմավորումը, գրապայքար. արևմտահայերենի ձևավորումը: Թեմա 2. Արևմտահայերենի հնչյունական համակարգը. ուղղագրություն. բաղաձայ-		

նական համակարգի արտասանական առանձնահատկությունները. հնչյունափոխություն: **Թեմա 3.** Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները: Դարձվածային միավորներ: **Թեմա 4.** Արևմտահայերենի և արևելահայերենի ձևաբանական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 5.** Արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951:
2. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
3. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007:
4. Սաքապետոյան Ռ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004:
5. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն – արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011:
6. Սարգսյան Ա, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985:

0302/Բ09.	Հայոց լեզվի ոճագիտություն	5 կրեդիտ
-----------	---------------------------	----------

4 ժամ	22/38/0
-------	---------

7-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման
---------------	---------------------------

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի ոճաբանական համակարգը:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- հայոց լեզվի ոճական համակարգի առանձնահատկությունների,

ոճերի դասակարգման հիմունքների մասին. • հնչյունական, բառային և քերականական իրողությունների ոճական կիրառությունների, առանձնահատկությունների վերաբերյալ. <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կատարելու գեղարվեստական երկերի ոճաբանական վերլուծություններ. ✓ (ընդհանրական կարողություններ) • Բացահայտելու խոսքի պատկերավորման ու արտահայտչական միջոցների ոճական - կիրառական առանձնահատկությունները:		
<i>Համառոտ բովանդակություն</i> Թեմա 1.Ոճագիտությունը որպես գիտաճյուղ. ոճույթի ըմբռնումը: Թեմա 2.Ոճերի դասակարգումը:Իրադրական և գործառական ոճեր. նրանց տեսակները: Թեմա 3.Հնչյունաբանական ոճագիտություն: Թեմա 4.Բառագիտական ոճագիտություն: Թեմա 5.Ձևաբանական ոճագիտություն: Թեմա 6.Շարահյուսական ոճագիտություն: Թեմա 7.Լեզվի պատկերավորման միջոցները: Լեզվի արտահայտչական միջոցները:		
<i>Գնահատման մեթոդներ</i> <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Քննական տոմսը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 2 միավոր:		
<i>Հիմնական գրականության ցանկը</i> 1. Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, 2 հատորով, Երևան, 1990, 1991: 2. Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1987: 3. Լ.Կ. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան, 2002: 4. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000: 5. Խ. Բադիկյան, Դարձվածային ոճագիտություն, Եր., 2002:		

0302/B1O	Հայոց լեզվի պատմություն-1	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	60(60/0/0)	
VI կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմության, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի հնչյունային, բառային համակարգերի պատմական զարգացումը:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. Գիտելիք և իմացություն • Հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունների, հնչյունական և բառապաշարային համակարգերի պատմական զարգացման վերաբերյալ: Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • հասկանալու ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը, պատմական զարգացումը, պարզաբանելու լեզվական շատ իրողությունների ծագումնաբանությունը. ✓ (ընդհանրական կարողություններ) • պատշաճ մակարդակով կատարելու գիտահետազոտական աշխատանք՝ տեսական խնդիրների շուրջ:
Համառոտ բովանդակությունը Թեմա 1. Հայոց լեզվի պատմությունը որպես գիտաճյուղ. լեզվի ուսումնասիրության աղբյուրները: Թեմա 2. Հայերենի պատմական զարգացման փուլերի ստորաբաժանումը և դրա վերաբերյալ կարծիքները: Թեմա 3. Լեզուների ծագման վերաբերյալ տեսությունները: Հ Թեմա 4. Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: Թեմա 5. Հայերենի բառապաշարի պատմական զարգացումը:
Գնահատման մեթոդները Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց՝ երեքական միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են. <i>1-ին ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է: <i>2-րդ ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
Հիմնական գրականության ցանկը 1. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին, Եր., 1940, մաս 2-րդ, 1951:

2. Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981:
3. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմության նախագրային շրջան, Եր., 1987:
4. Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 1989:
5. Ա. Այտընյան, Քննական քերականություն, Եր., 1987:
6. Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ., Եր., 1979:
7. Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1966:
8. Էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Եր., 1964:

0302/B11.	Հայոց լեզվի պատմություն-2	4 կրեդիտ
Շաբաթական 3 ժամ	(45/0/0)	
VII կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմության, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացումը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
• հայերենի ծագման մասին եղած տեսությունների, ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացման վերաբերյալ, • պարզաբանելու ձևաբանական և շարահյուսական շատ իրողությունների ծագումնաբանությունը:		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
• հասկանալու ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը.		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		
• պատշաճ մակարդակով կատարելու գիտական հետազոտություն, գրելու կուրսային աշխատանքներ, պատրաստելու զեկուցումներ:		
Համառոտ բովանդակություն		
<i>Թեմա 1.</i> Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: <i>Թեմա 2.</i> Հայերենի ձևաբանական համակարգի պատմական զարգացումը: <i>Թեմա 3.</i> Հոլովման համակարգի		

պատմական զարգացումը: Թեմա 4. Բայ. հայերենի դերբայները և նրանց պատմական զարգացումը: Թեմա 5. Խոնարհման համակարգի պատմական զարգացումը: Թեմա 6. Շարահյուսական համակարգի պատմական զարգացումը. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնություն. կառավարում /խնդրառություն/. առդրություն. շարադասություն: Թեմա 7. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ. պարզ և բարդ նախադասություններ:		
Գնահատման մեթոդները 2 ընթացիկ ստուգում՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով: Ստուգման ձևերն են. 1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0.5: 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0.5:		
Հիմնական գրականության ցանկը 1. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին, Եր., 1940, մաս 2-րդ 1951: 2. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981: 3. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն /նախագրային շրջան/, Եր., 1987: 4. Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 1989: 5. Ա. Այտընյան, Քննական քերականություն, Եր., 1987: 6. Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ., Եր., 1979: 7. Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1966: 8. Էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Եր., 1964:		

0302/Բ55	Բարբառագիտության հիմունքներ	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	30(22/ 8/0)	
IV կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի բարբառները, դրանց դասակարգման սկզբունքները, բարբառների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համա-		

կարգերի առանձնահատկությունները:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> • բարբառների դասակարգման մասին եղած տեսությունների վերաբերյալ, բարբառների ուսումնասիրման մեթոդների վերաբերյալ. <i>Ունակ կլինի</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • հասկանալու հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները. ✓ (ընդհանրական կարողություններ) • ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները, տարբերակելու բարբառը, ենթաբարբառը, խոսվածքը:
Համառոտ բովանդակությունը Թեմա 1. Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ: Բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները: Թեմա 2. Բարբառների հնչյունական համակարգերը: Թեմա 3. Բարբառների բառային համակարգերը: Թեմա 4. Բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները. սահմանական ներկան՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք: Թեմա 5. ՈՒՄ, ԿԸ, ԵԼ ճյուղերի բարբառներ: Թեմա 6. Տարբեր ճյուղերի բարբառների ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:
Գնահատման մեթոդները 2 ընթացիկ ստուգում՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով: Ստուգման ձևերն են. <i>1-ին ստուգում.</i> Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0.5: <i>2-րդ ստուգում.</i> Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0.5:
Հիմնական գրականության ցանկը 1. Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա – Նոր – Նախիջևան, 1911: 2. Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957: 3. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր. 1953: 4. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն Եր. 1973: 5. Մ. Ասատրյան, Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ձեռնարկ, 1985:

6. Ռ. Սադաթեյյան, Բարբառային բառաշերտը արդի գրական արևելահայերենում, Եր., 2011:

0302/B09	Լեզվաբանության հիմունքներ	4կրեդիտ
Շաբաթական 4ժամ	60 (45/15/0)	
2-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ընդհանուր կարգերը, աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում:		
